


ՅԵՐԱՅՈՒՅԷՆ
ՅՈՑՊՈՐՏՅԱՆ

ԽԱՐԿԱԿ

Գինն է 10 կ. Գառառներում 12 կ. 1911, Շաբաթ, ՆՈՅԵՄԵՐԻ 12-ին. Թիֆլիս. №46
Հ Ա Յ Ժ Ո Ղ Ո Վ Ո Ւ Ր Դ Ը ԵՒ Ն Ր Ա Ա Ռ Ա Ջ Ն Ո Ր Դ Ն Ե Ր Ը




ԳՐԻՔԵՐ.

ՊԻՏ.ՅԵՐՈՅԱ

Դուք ձեռք մի հանեք, մենք առելի լաւին կը շողենք կաթողիկոս. և Էնպէս կանենք, որ ոչ խորովածացու. միսը էրիւր և ոչ շամփուրը. ձեռք միք հանի. մենք որ էստեղ ենք, դուք էլ ինչ:

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



«ԽԱՔԱԲԱԼԱ»
Բ Ա Ճ Ն Ե Գ Ի Ն Ն Է



Տարեկան	5 ռ.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

VI
Տարի

ՄԱՔԱԲԱԼԱ

VI
Տարի

Երգիծարանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի
ԼՈՅՍ Է ՏԵՄԵՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱՔԱՔ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և դժբեհ, անկեղծ և կեղծա-
չոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների:

Անհրաժեշտ քեր բոլոր բնագիտական համար

«ԽԱՔԱԲԱԼԱ» շաբաթի ծիծաղեցնում է, շաբաթին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ
ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քեֆերդ ուզի:
Հասցեն՝ Тифлисы, редакция „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակիչ՝ Աստ. Երիցեան

Մեր թերթի բաժանորդներին «Սուր-
հանդակ» ամենօրեայ թերթը ուղար-
կում ենք պակաս վճարով:

100 տարով բաժանորդագրել ցանկացողին
75% զեղջ:

Ձրի կարգացողներին պէտք է նկա-
րենք գլխիվայր:

«ՄԱՔԱԲԱԼԱ» ՕՐԱՑՈՑԸ

1911 ՆՈՅԵՄԻԵՐ 30 օր

12

Суббота շաբաթ
Հունիս 1

13 (կիր.) Տօն անտուն անտէրաց և անխիղճ տանտէրաց, որք ծախսերի մահանով կլպեն կե-
նողաց և պատճառ դառնան նոցա աղջկանց ար-
շինը 2 բուրլանոց վիշիվկայի փոխարէն 1 բուր-
լանոց պրօշիվկա դնել վասն շապիկաց և ընկե-
րին դոցա:

14 (բ. 2.) Յիշատակ մեռելոց քայնայից
հայոց, որ թագուն կակալ ջարդէն, բայց աշկա-
րա ոչ կարէն երկուց իշից գարին բաժանել:

15 (գ. 2.) Անւանակոթիւն միտրօպօլիտ
Գենջեանի. Ասուած արժանի արասցէ զնա ստա-
նալ պատասխան իրարամտիքական վարչութիւնէ
թէ Բէվիլօրի թարգմանութիւնն նորա ընդու-
նեալ է, թէ թղթից զամբիւղն նետեալ բիթուր է
կղեալ:

16 (դ. 2.) Պաս է, ամեն բան կեր բացի
թանկապատէ:

17 (ե. 2.) Տօն քամի կուլտուղ ուսուցչաց
Շուշուայ, որք դպրոց.— ուսուցչ. Փօնդն կամեն լի-
նել այնպէս, զի իրանք ոչ թէ զհարուստ ինդերու-
ցին, այլ պահանջեցէն: Ցանկամ թարձարցուն
լօզիկային այդպիսեաց:

18 (ուրբ.) Պաս է մինչև ժամը 2-ը, այնու-
հետև կարես ուսել ի Շէյթան բազարի պատ-
րաստեալ քեարաբ— շիշիկ կարմրեալ:

Ասող. տօմար. և օրացոյցագէտ

Փարեմուզ

ԸՍԿՍԵՆ ԺՈՂՈՎ ԸՆԴՆՈՐԹԱՐԵՆՈՒՄ

Նոյեմբերի 7-ին. առուտեհան 11 սնաթից
ջեր վանքի գալաւնում ու իժում էլ՝ սնա-
թի 12-ին առաջնորթարանում ժողովք կէր
կաթղիոսական ղեպուտատ նընդրելու հա-
մա:

Մօզ էին էլի մեր ասկի սէրից բունած-
ները՝ ասկի փողոթիքը, փրգիչները, զԸԼ-
փիչները ու խէլիմ էլ պատուաւոր խալիս,
որ էգ մնացածի մէջ էնպէս էին ջողում,
վունցոր էծիրը ոչխրի սուրուի մէջ:

Էփրիմ էպիսկոպուղը սնաթի 12-ից կէս
սնաթ եղը՝ դուս հկաւ նեքսի օթախիցը ու
երէսը խաչակնքելով աղօթք ասաց: Ամինքը
վիկայան տեղներիցը, իժում նստեցին:

Էփրիմ էպիսկոպուղ.— Խօս գիղիք ինչի
համա էք էկի. ջողեցէք ձիգ համա կաթ-
ղիոսական ղեպուտատ, համա մինչկի էգ՝
ջողեցէք մէ նախագահ էլ, վուր ձեզ կանայ
դիմնայ:

Չայներ.— Սրբազան, արա թվ է էնթա-
ւուրը, վոր մեզ դիմնայ:

Էփրիմ էպիսկոպուղ.— Կացէք մէ ասկերը
կարդանք. (կարդում են) հարիւր ինն հոգուց
98-ը էստի ին. լաւ. նընդրեցէք, ասի ձիգ
համա նախագահ:

Հայկ Տէր-Աստաճատրեան.— Սրբազան
թէ խիւք ունիս խաթրիս մի կպչի, թէ չէ
խօս գիղիս իմ խասիաթը, էս սնաթիս դուս
կէհամ սյ:

Մակար Չմշկեան.— Էս սնաթիս մէ էր-
կու խօսք ասիմ... ջէր ասիմ:

Ալիսանեան.— Նախագահ նընդրինք:

Էփրիմ էպիսկոպուղ.— Ո՞ւր նընդրինք:

Համբ. Առաքելեան.— Օրէնքով պիտի
զաղտնի նընդրութիւն ըլի, վուր յետոյ շա-
բիւր չմոզոնի:

Բժշկապ. Նաւասարդեան.— Եաշիկներ
բերէք:

Սամ. Յարութիւնեան.— Լօբի ունէք:
Հայկ. Տէր-Աստաճատրեան.— Սրբազան,
ասէք սրանք խէլքի կէհան թէ չէ, էս սնա-
թիս դուս կերթամ սյ:

Մակար Չմշկեան.— Սրբազան թող տէք
մի էրկու խօսք ասիմ. իս էն էի ուղում
ասի, ինչ էի ուղում ասի, հա. մնամ...

Համբ. Առաքելեան.— Վունց վուր տեհար
իս նընդրեցայ ատիւնպիտ. Աստուծ ձիգ
կինք տայ: Էս տեսակ պատիւ վուր դուք
ինձ արեցիք, հալբաթտա իս էլ արժանի էլ
վուր չլէի, էլի մարթ իմ, հէր օխնածներ
մաշ խոմ անաստուծ չիմ—բաս աղ ու
հաց չիմ կերթ:

Մակար Չմշկեան.— Պարուն նախագահ,
էրկու խօսք—ինթրիմ, ուղում էի ասի:

Հայկ Տէր-Աստաճատրեան.— Ձիգ իմ
ասում—թէ ձէները չին կարի էս սնաթիս
դուս կեհամ սյ, իս էսինք խփսիաթ ունիմ:
Նիկ. Կաճկաճեան.— Բանը ժողորութիւն
է, ժողովութիւն ումը ուզի նա էլ պատգա-
մաւոր պիտի ըլի. բնս...

Անանեան (կանացի ձայն).— Իս ուղում
իմ խօսի կաթողիկոսացուների վրէն:

Համբարցում Առաքելեան.— Կուլի խօսիւ
համա մէհակ խօսիւ, ուշունցներ չիմ թող-
նի, էստի խօս գաղէթներ չէ:

Չայներ.— Ո՞նց, մնց՝ բաս ուշունց վուր
չի՞ մնց խօսինք:

Ախալցիտացի պատգ. Թախմախճեան.—
Իս ասում իմ էս ժողովքը էն թաւուր թո-
ղովք է, վուր Աստուծ ազատէ. համա մինք
պտինք իմանայ թէ ով ուրիւ լաւ կաթ-
ղիոսացու է...

Սուխումի պատգամաւոր Չէյթունեան.

Անանկ է, ախպար, էս հինգ հարիւր—վեց հարիւր վերստ տեղէն էկիլ իմ հոս, կուզեմ իմանալ ով ուզիր լաւ կաթողիկոսացու է, ջգանքմ-մենք ի՞նչ, անտառում ապրող մարդիկ ենք:

Ալիխանեան (Թէլալ պատգ.) — Գաւառը ուղղակի տգէտ է, ոչինչ չի ասկանում, հարկաւոր է բզկ:

Միկ. Կանկանեան.—Ժողովուրդը... ժողովուրդը ասում է...

Հայկ Տէր-Աստուծատրեան.—Պարուն նախագահ, պարուն նախագահ, ֆո՛ւ, ձիգ իմ ասում պ. նախագահ, իս դուս կիրթամ թէ դուք էլի կու խօսիք:

Մակար Չմշկեան.—Թոյլ տւէք ինձ էրկու խօսք ասիմ—այ իս խօսմ, բժիշկ Շխեան և Սպենդուրեան... նաւ, նամաւ... Չերքեզ... Յարութիւնեան:

Համբ. Առաքելեան.—Իս ասի վուր կուլի խօսիլ՝ համտ ուշուց տալը դադաղա է:

Ալիխանեան.—Ի՞նչ էք ասում, հնց թէ դադաղա է, բաս մինք էստի ետղուզ ինք էկիլ, մինք ձեր թիկնածի կուշուց տանք դուք էլ: թէ կանաք՝ մեր թիկնածին ուշուցնիւր տւիք:

Չէյթունեան.—Մինք հետու տեղին էկանք, դարիք մարթիք ինք—եթէ գիգնայինք թէ հոս խօսք ու զրոյցէն աւիլ, սանկ, անուշ հայհոյանքներ չըպիտի ըլային, երբէք չէի գար—այս երկար ճանապարհ—կուզեմ իմանալ ձեր կարծիքը:

Յով. Սպենդուրեան.—Եթէ միայն նոր կուզէք կարծիք կազմել, այստեղի հայհոյանքները լսելով—վայ այն պատգամաւորին:

Մակար Չմշկեան.—Պարուն նախագահ թող տւէք ինձ երկու խօսք...

Հայկ Տէր-Աստուծատրեան.—Դուս կիհամ, դուս կիհամ, Աստուծ գիղենայ, հանաք չիմ անում:

Սամսոն Յարութիւնեան.—Մենք գիւփուցքս էլ գիղինք թէ ով ի՞նչի համա է էկի էստի. խօսելը աւելուրդ է:

Չէյթունեան.—Իս հետու տեղին էկած իմ, եթէ գիղայի թէ հոս քննադատութեն և այն էլ նոյն իսկ հայիվար չըլլար՝ ես երբ կը դայի:

Սամ. Հարութիւնեան.—Կարելի է վուր պատգամաւորացուները խօսին իրանց նընդրելիների մասին՝ լաւ բան կուլի այ:

Համբարումցեան.—Իմ ձախ թևի հարեւանը հետտի արդա ուրդա բաներից է խօսում վուր... վիճնց թէ գիղին, վիճնց թէ խօսին, իս ասում իմ էստի հոսանք չկայ, էստի աւտումատ բանիւր չասին:

Հայկ Տէր-Աստուծատրեան.—Իս դուս կիրթամ այ, ձեներդ կտրեցէք, տսեցէք վուր սրանք մե քիչ յեզ կենան, պատի կուռը քաշելին:

Համ. Առաքելեան.— Պարունիւր ուշինցնիւր տալ չի.—Սոսեցէք, ով վուր պատգամաւոր էք ուզում ըլի:

Չայնեան.—Յով. Սպենդուր, Սամ. Յարութիւնեան: Սամսոն Յարութիւնեան—Չէ

չէ, չիմ կանայ, իս էրուսաղէմ՝ Հաջի իմ դասի, հիմի մէնակ Համբարցումը չէ Հաջի, իս էլ իմ, էսպէս վուր վուցն գուզէզ ասէք, իս էստղանց չիմ գնայ:

Համբ. Առաքելեան.—Հակառակ հոսանք թէկի կայ, բաս ի՞նչու չի խօսում, հէր օխնածներ վուրտն է էլի:

Հակառակ հոսանք.—Մինք պատգամաւորացու չունինք, մինք գուզինք ուշուցներ տալ, հմը ուշուց տանք:

Բժիշկ Մայսուրեան.—Չի կարելի. էստի ժողովք է:

Յով. Սպենդուրեան.—էստի ժողովք է և վուցն թէ խօսարան:

Համբ. Առաքելեան.—էստի ժողովք է... Մակար Չմշկեան.—Թոյլ տւէք գէթաղւայ մէ էրկու խօսք ասիմ—էստի ժողովք է:

Ալիխանեան.—Իս արմանում իմ, վուր Յով. Սպենդուրովը էս թաւուր մտկիւր է ասում—բաս նա էլ ի՞նչ թաւուր ատուկատ է, սուգուրը թէկի կարելի է ուշուցներ տալը, վուցնոր աղաթն է...

Չայնեան.—էտ թաւուր բան իսկի չի կարելի վուցն մի տիղ:

Ալիխանեան.—Ես ձիգ հետ չիմ խօսում: Վիճնց թէ չի կարելի, կարելի է:

Համբ. Առաքելեան.—Ձեր պատգամաւորի անումը տւէք:

Չայնեան ետեւից.—Մեր պատգամաւորութինի ձէնը կտրել է:

Յով. Սպենդուրեան.— (Գնալով դէպի առաջ) ես վուցն որ իստակ ասկասէր ու հայոց ժամի օրինաւոր դաւակ, ես ասումիմ, վուր էտ սհաթին ամենալաւ կաթողկոսացու թէ կայ՝ մէնակ ամենապատիւ Տէր Տէր Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանն է:

Մենք պիտի լաւ գիղենան թէ մի քանի տարիներ աղաք կաթողկոսաները ինչ օյին մօյնի բանիւր դառան. այ իս էտիմ ասում, Օրմանուվի ժուզ էտ բանիւրը չի իլի, չունքի Օրմանուվը երեք ունիփսատ է աւարտի, հանաք բան է իրիք...

Մաշ...

Իս ասում իմ սա լաւ է ու թէկի ինձ ընտրեցիք ու իս գնամ էլմիածին, իմ ձէնը սըրան պտիմ տայ. (տաշի ին տալի)

Հայկ Տէր-Աստուծատրեան.— Ո՛հ ինչ կօսիմ:

Համբ. Առաքելեան.—Հակառակ հոսանքից մարդ չըկայ:

Չայնեան.—Ոնց թէ չըկայ համա վուր չէք թողնում, վուր ուշուցնիւր տանք:

Սամ. Յարութիւնեան.—Կարելի է վուր խօսին և վուր պատգամաւորները:

Ալիխանեան.—Կօսիմ թիկնածութիւնն իմ դնում: (Գալիս է կաղնում է մէջ տիղ):

Ժողովուրդը բռնութիւն չէ միթամ. ժողովուրդը ասում է... մենք ով ինք, դուք ով էք. է իս ձիւր... դէ... կարկաժը ի՞նչ ասիմ, թաղեցէք ձիւր մեռիլներին:

Հայկ Տէր-Աստուծատրեան.—Ձիւր կին-թանի մեռիլներին. էլ հետը:

Չայնեան.—Աղմուկ, շվոց, տաշի.

Հայկ Տէր-Աստուծատրեան.—Իս դուս կիհամ այ. դուս կիհամ ես ու իմ պայտած հոքին—իս հանաք մասնաւորութիւն չիմ միւրում:

Մակար Չմշկեան.—Գ. նախագահ թոյլ տւիք մէ էրկու խօսք ասիմ...

Նախագահ.—Բաւական է. չէ, չիմ թողնի. չիմ թողնի, իս չիմ—չիմ թողնի ասում իմ էլի, էկէք շարեր, գցէք, ով վուր շատ քար ստանայ նա էլ կուլի պատգամաւոր. (գալիս ին մէկ մէկ ու քարիւրը գցում ին երկու եաշիկների մէջ):

Համ. Առաքելեան.—Իս այտարարում իմ վուր Վրաստանի ու Իմէրեթի պատգամաւորներնուր է պարուն Յովհաննէս Սպենդուրովը—սրան պամոշիկ բժիշկ Արտաշէս Շխեան:ցովը

Ժողովքը փակած իմ համարում:


Իս էլ փակած իմ համարում՝ համա իմերէլը էստի ինչ գործք ունի:

Գասպար Կարաուզովի սեկրետար:



ՍԷՐ ԿԱՅ ՍՐՏԻՍ ՄԷՋ...

Սէր կայ սրտիս մէջ...
Սէր կայ սրտիս մէջ.
Մի հուր ու կրակ, մի բոց ու հնոց
Սէր կայ սրտիս մէջ,
Մի կայծ երկնային, մի Աստուծային
Սէր կայ սրտիս մէջ,
Մի անմար, անշէջ և անվերջ, անվերջ
Սէր կայ սրտիս մէջ,
Սէր կայ սրտիս մէջ:
Օ՛, ես սիրում եմ, սիրում եմ բոլոր
—Այն վիհ և ստոր,
Այն թոյլ ու հզօր
Արարածներին—այն, բոլորին,
ընդ չեն սիրելի,
երբէք չեն սիրելի:
Սիրում եմ անանց—և նրանց, նրանց,
Որոնք սիրելի են...
Որոնք ապրել են...
Որոնք տանջել են:
Եւ բոլոր նրանց—որոնք չեն ապրել.
Որոնք չեն տանջել:



ԹԱՅՅԱՅԱԿԱՆ ԹԵԿՆԱՄՈՒՆԵՐԸ ԵՒ ՇԱՀԱԳՈՐԾԻՈՂԸ

Ա Ն Է Ժ Ք



Անիծում եմ, դաւակն, անիծում եմ քեզ—թող Տէր Աստուածը քեզ հինգ արու զաւակ պարգևէ և զբանջ ա-
մենքն էլ պատկիրն՝ ինչպէս դու ես պատկուում—սիրահարւած ու քեզ, իրենց հօրը՝ երբէք չլսեն ամուսնական
հարցում:

Սիրում եմ անհուն—արև, ընթացան,
 Երկինք ու երկիր,
 Հուանին, աստղերին, և այն բոլորին,
 Որոնք յաշիտեան
 Ինձնից անրաժան,
 Եւ կան և չկան:

Սիրում եմ և ձեզ և ձեզ մարդիկներ
 —Թշուա եղբայրներ...

Օ, ձեզ սիրում եմ ես առաւել:
 Ձեզ, ձեզ—ամենքին,
 Թոյլին, ընկածին,
 Որբին, անճարին, խենթ մոլորածին...
 Եւ բարեգործին,
 Եւ չարագործին,

Ցուսահատածին, յուսով լցւածին,
 Այո, բոլորին,
 Անվերջ բոլորին:

Սիրում եմ անկեղծ, ազատ մտեանս,
 Ամենքին՝ գրկել,
 Գլուխ, համարել,
 Եւ նրանց վշտով—ծով արցունքներով
 Տարել ու տարել...

Եւ ախ երազել, որ կայ և կգայ
 Մի ազատ վարկեան,
 Երբ ցուրտ աշխարհում, այս համատարած
 Արցունքի ծովում,
 Կտրէ մի կեանք—անհուն երջանիկ,
 «Կեանքի երազը»
 Երազից քաղցրիկ:

Սիրում եմ կրկին, կրկին հաւատար
 Որ կվերանան,
 Այս անարգահան,

Կեղծ ընկերական,—այս մուսայական
 Լկտի և ստոր

Այս ընդհանրական և խենթ և ցնոր
 Բոլոր ձեները,
 Եւ մարդը մարդին, մէկը ամենքին
 Ամէնքը մէկին

—Ձերմ կմտեանս—առանց խտրութեան
 Առանց սև կրթի,
 Եւ դասակարգի,

Ա՛խ առանց ճշման—անազատ կամքի.
 «Առանց կրօնքի...»

Եսամօլութեան, ազգամօլութեան
 Շահամօլութեան

Եւ այլ անարժան—դարեր անրաժան
 Մի յետին մտքի,

Եւ ընդդէմ անարգ-խաբուսիկ փառքի:
 Մէր կայ սրտիս մէջ...

Մէր կայ սրտիս մէջ,
 Որ ստիպում է—զգալ ու զգալ

Եւ զգացմունքին անշեղ հաւատալ:
 Օ, հուր ու կրակ

Ա՛խ բոց ու հոտ...
 —Մէր կայ սրտիս մէջ... մի անվերջ անվերջ

Մէր կայ սրտիս մէջ,
 —Այս սև սրտիս մէջ,

Այս խեղճ սրտիս մէջ:

ԽՆՅՐ



—Պարուն Կարապիտ, առաջնութարանի
 Ժողովում կէի:

—Էի, մաշ, էի:

—Իժում Սամփսոն Արութինովը ինչ ա-
 սաւ:

—Ասաց: որ ինքը հիմի հաջի է դառի ու
 էրուսաղէմի դէպուստտ է էի:

—Ե՛ք էդ լաւ է. մաշ հոքու ճամփին է
 կանգնի էլի:

—Հրամանք իս հոքու ճամփին:

—Ասումին թէ միթո՞ւմ մի քիչ էլ Օրմանովի
 կուռն է քաշի:

—Կուրի վուր էտ էլ դրուստ ըլի, չունքի
 Օրմանովը հիմի ասկային վարչութիւնիցը
 դաւի է անում օխտ հազար թուման—
 Սամփսոնը նրա համա արվակատութիւն կօնի,
 ու հետտի օյի կուզայ էդ ղուղուլներու
 զլիսին, վուր քու հաւնածը:

—Ա՛յ, մայ, խիլունք մարթ իս այ իս ու
 Աստուճը, վունց իմացար աշխարքի խէրն
 ու շարք. մարթկերանց փիքերը...:

—Մենակ էք...

ՊՇՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԻ Է՞՞

Պարսկի մէկը հանդիստ նստել էր իր
 տան մօտ և, նայելով իր ածիլած սևաթուխ
 մանուկներին, մտածում էր յուսահատ:

—Չարմանալի է, կեանքում ինձ իսկի
 բան չի յաջողում: Իմ համբարը տարածել
 է արդէն ամբողջ տիեզերքում—սի չի ճա-
 նաչում հրաշագործ պարսկական դիւափո-
 շիւ: Իմ գեղեցիկ «Առիւծ և Արև» շքանշանը,
 կարծեմ, միմիայն ծոյլ մարդն է, որ իր
 վրայ չի պահում: Բայց արի ու տես, որ
 ինձ իսկական քախտ ու դադար չկայ.
 Կերիք է որ մի չնչին թուման չվճարես,—
 իսկոյն ևեթ քեզ կցցեն սուր...
 Ու վախեցած պարսկի առաջ դուրս եկաւ
 մի խրոխտ դէմք.

—Վայր ընկիր երեսիդ վրայ, սատանի
 ճուտ. ես շահնշահն եմ, արքաների արքան:

Պարսկը վայր գլորեց գետին սարսա-
 փած ու լսում էր ահեղ ձայնը՝

—Տարէք սրան ձողի անցքէք:
 —Ինչո՞ւ համար, ձերդ արնային բնձա-
 փայլութիւն.— հազիւ թոթովեց հպատակը:

—Հազի համար. ես սովորութիւն ունեմ
 օրական 1000 ձեզ պէս դարչիկների ձողի
 անցնել տալ, իսկ այսօր անցնել եմ տել
 միայն 999...

Պարսկը գլխի ընկաւ, որ իր բանը
 բուրդ է:

Մի ըոպէից յետոյ նրա ունայն մարմինը
 ձողի էին անցկացնում ոչ այնքան էլ յարմար
 կողմից, և պարսկը վհատուած մտածում էր՝

—Վատ չէ... միայն, գուցէ, ինձ համար
 աւելի շահաւէտ կլինէր, եթէ իմ տեղ ցցէր
 շահնշահը...

Անցաւ մի քանի ժամանակ, և մի ուրիշ
 տան մօտ նստել էր մի ուրիշ պարսկ և
 խորհում էր իր հայրենիքում կատարող
 փոփոխութիւնների մասին:

—Գործը լաւանում է. մեր արքայի
 վզակութիւն տւին ու դուրս քշեցին.— ժողո-
 վրդական ներկայացուցիւնն, անկասկած,
 պարսկական փողի կցանէ հին կարգերի
 վրայ... կչքանայ միանգամայն այդ սուր...
 բաների յիշատակը:

Ճանապարհի վրայ երևացին երեք փայ-
 լուն ձիաւորներ, որոնք մօտենալով, գո-
 ռացին՝

—Վայր ընկիր երեսիդ վրայ, սատանի
 ճուտ... Մենք մէջլիսի, ժողովրդական ներ-
 կայացուցչութեան Կիմարկութեան անդամ-
 ներն ենք:

Պարսկը սարսափած վայր գլորեց գե-
 տին և լսում էր հրամանը՝

—Ձողի անցքէք...

—Ողորմած եղէք, ձ-ձերդ ժողովրդական
 գերազանցութիւն...:

—Լռի՛ր: Դու կասկածում ես ժողովրդա-
 կան ազատութեան դէմ լարող խարդախ
 դաւադրութիւնների մէջ...

Եւ այս պարսկին ձող անցկացրին ոչ
 ցանկալի կողմից, և նա, նստելով նրա վրայ
 յարմարութեամբ մի քանի ըոպէ, խելա-
 ցիօրէն՝ որոշեց

—Հրաշալի է... Կարելի է ասել, որ ձող
 չէ, այլ փափուկ իւղ... Միայն լաւ կլինէր,
 որ այս տեղը նստէր ողջ մէջլիսը...

—Անցաւ էլի մի այնքան ժամանակ, որը
 չէր բաւի ամենափոքր պատմական պարա-
 զայի համար անգամ, և Պարսկաստանում
 սկսեցին այնպիսի խառնակութիւններ, որ
 ազգային առիւծը կուշ ածեց իր պոչը, իսկ
 պարսկական արևը ամաչեց ու թազնեց:

Պարսկաստանում երևան եկաւ սկզբում
 մի շահ, որ Օղեսասից էր վերադարձել, ա-
 պա ամբողջ մի տասնեակ շահ-աւազակներու
 Դրանք կուռն էին միմիայնց դէմ և ժողո-
 վրդական ներկայացուցչեան զօրքերի
 դէմ միաժամանակ: Ողջ պարսկական կեանքը
 դարձաւ պարսկական փողի. մէկը դրանից
 հոտ էր առնում, միւսը անյապաղ փոշտում
 էր և... ոտները ձգում:

Այստեղ օգնութեան եկան օտարերկրա-
 ցիները:



ձիշտ է ընդամենը մնացել էր մի քանի տասնեակից ոչ աւել, բայց սակայն, չէ որ հոգ պէտք է տանէր դրանց մասին:

Հաւաքելով մի տեղ, պարսիկները հարցրին օտարերկրացիներին.

— Պէտք է մեզ նաճէք և կառավարէք:

— Անպայման... Միայն դուք մի անհանգրստանաք. մենք ձեզ կթողնենք ձեր բոլոր կարգերը, ձեր ողջ կենցաղը...

Պարսիկները անհանգստացան.

— Իսկ ինչ կատէք... ձողերի մասին:

— Իհարկէ, կըթողնենք... էլ ինչու համար է պարսիկը, եթէ նա չի կարող իրեն մխիթարել, որ ձող կ'անցի...

Միւս օրը, երբ օտարերկրացիները եկան պարսիկներին մօտ, սրանցից ինն արդէն ձող էին անցկացուցել, իսկ տասներորդը նոր էր անցկացուցել:

Նրա վերջին խօսքերն էին՝

— Պարսկական առածն ասում է՝ «Քանց տասը տարի սպասել մահւան, լաւ է մի անգամ փորձել այն...

Յետոյ պարսիկը լռեց և խորասուզեց թունդ մտքերի մէջ:

Օտարերկրացիները, զարմացած պարսիկ ժողովրդի կամքի ոյժի վրայ, շնորհակալութեան և սիրոյ արցունք թափեցին նրա համար:

Եւ այստեղ հասաւ Պարսկաստանի վերջը: Է՛ր Կոնստանդուպոլիս:



ՎՕԼԱՊԻԿ*

Կանանց լեզուն իրենից ներկայացնում է որպէս մի առանձնատեսակի վօլպպիկ:

Ահա մի քանի օրինակներ իրենց թարգմանութեամբ:

Ես ձեզ սիրում եմ: (Ինձ դուր է գալիս ձեր փողի քսակը):

Ես ձերն եմ. (ձեր փողերն իմն են):

Իմ բարեկամ (ամուսնուն). (քո բարեկամն իմն է):

Ես չեմ ուզում. (ես խիստ ուզում եմ):

Ձեմ թոյլատրում. (ինչքան ուղէք):

Ես ձեզ չեմ սիրում. (դուք խիստ ժլատ էք):

Երգում եմ. (ես անպատճառ կը խափեմ):

Մնացէք. (էլ ինչ էք դանդաղում):

Թողէք ինձ. (եկէք իմ քամակից):

Թարգմ. Գ. Բարբ.

*) Վօլպպիկը համաշխարհային մի լեզու է, որով սակայն, ոչ ոք չի խօսում:

Մանօթ. Քարգմ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔԱՏՐՈՆ

Այն ժամանակ, երբ Զուբալովի թաւրոնի բեմի վրայ ներկայացնում էին դերասանները, միևնոյն ժամանակ և նոյն թատրոնի դահլիճում պ. Մ. Ստամբուլցեանը ներկայացնում էր «Ջոն Չոլ» կատակերգութիւնը և արարածով, որը փոխադրել է յայտնի դրամատուրգ Կլայիկչեանը Գեօրգի Աղաբաջու համանուն վէպից:

Որովհետև թէ այդ կատակերգութիւնը և թէ դերակատար Ստամբուլցեանը նոր բաներ են հասարակութեան համար, ուստի ի գիտութիւն համայն սօզի, համառօտ կերպով առաջ կըբերենք մէկի կենսագրութիւնը իսկ միւսի բովանդակութիւնը:

Ինչպէս յայտնի է Ստամբուլցեանը ծնւել է իր հօր հորազատ կնոջից: Մտուցող տեղի է ունեցել մօր ներկայութեամբ՝ «Ջոն Չոլ»-ը ներկայացնելուց առաջ՝ Ստամբուլ քաղաքում (դրա համար էլ կոչւում է Ստամբուլցեան):

Այնուհետև մեծանում է պ. Ստամբուլցեանը հանդարտ բնակորութեամբ և ապրում է մինչև յայօր Դարչօի կարած գլխարկի տակ:

Այժմ անցնենք կատակերգութեան բովանդակութեանը:

«Ջոն Չոլ»-ի դէպքը պատահում է անցեալներում յաջորդաբար իւրաքանչիւր շաբաթւայ ներկայացումներին:

Բեմը ներկայացնում է Զուբալովի դահլիճը, որի երկու կողմից շարւած են երկար նստարաններ:

I գործ.

Լ. — (Ներս մտնելով դահլիճ) պ. Ստամբուլցեան, խնդրեմ ցոյց տաք ձրտեղ՝ եմ նստելու:

Ստամբուլցեան. — (տոմսակին նայելով և գլուխը քորելով) ախ ներողութիւն. սա խմբագրական տոմսակ է եղել: Ես կարծեցի որ դուք այս ներկայացմանն էլ չէք գալ, ուստի, ըստ սովորականի, ձեր տեղը նրատացրել եմ իմ մամիդիս սղջկանը:

Լ. — Բայց չէ՞ որ ամօթ է, խմբագիր մարդ և կանգնած մնալ:

Ստամբուլցեան. — Այդ դէպքում եկէք «Հորիզոն»-ի տեղը ազատ է, այնտեղ նստեցէք:

Լ. — (Գլուխը շարժելով նստում է այդ տեղ):

II գործ.

Խ. — (Սխալմամբ գալիս նստում է «Մըշակ»-ի տեղում, որ այդ ժամանակ ազատ է լինում):

Կանտրալտօր. — Ներողութիւն պարոն, դա «Մըշակ»-ի տեղն է, խնդրեմ վեր կենաք երբ վարագոյրը բարձրացնեն և դահլիճը մթնացնեն, այդտեղ ես եմ նստելու:

Խ. — (Ուզում է վեր կենալ)

Ստամբուլցեան. — Ոչինչ, ոչինչ, դա ապագայ խմբագիր է, թողէք նստած մնայ:

Կանտրալտօր. — (Մոծբակը բարելով հեռանում է):

III գործ.

Ստամբուլցեան. — պ. Փար, հետեալ ա-

թոնն ազատ է, խնդրեմ գլուխը նստեցէք, իսկ ձեր տեղը չընկեք: Սխալմամբ, որպէսզի մասլահաթ անի իր ընկեր դերասանի հետ, որոնք նստած են բեցինգինտների ազատ տեղերում:

Փար. — Խնդրեմ, համեցէք, համեցէք, քանի որ դուք կարգադրել էք, ինչ կարող ենք ասել ձեր այդ խելացի կարգադրութեան դէմ:

IV գործ.

(Չի կատարել. բայց յոյս կայ որ կատարել)

Ստամբուլցեան. — պ. Փար, իրաւունք չունենաք այսուհետև իրեն բեցինգինտ ազգային տրմսակով գալ ժողորդական թատրոն:

Ես այդ կարգադրում և հրամայում եմ իրեն կարգադրիչ (ցոյց տալով պրօգրամը և կրճիթ կարմիր ժապաւենի աստղը) անատեւէք այս ծրագրի տակ խոշոր տառերով դրւած է «կարգադրիչ՝ Մ. Ստամբուլցեան», իսկ կրճիթս էլ կպցրած է գեներ... ուզում էի ասել կարգադրիչութեան կարմիր աստղը:

Փար. — (վախեցած) Թող ելիցի այնպէս որպէս դու կամիս:

Վարագոյր

Ներկայացումը ընդհանրապէս յաջող անցաւ: «Ջոն Չոլ» մէջ մանաւանդ հրաշալի էր իր դերում պ. Ստամբուլցեանը: Միայն խորհուրդ ենք տալիս պարոնին գրիմի վրայ առանձին ուշադրութիւն դարձնել:

Պ. Փարն այնքան էլ լաւ չըտարաւ իր դերը, նրան խանգարում էր մանաւանդ ձայնը. դրան էլ խորհուրդ կըտանք միւս անգամ դահլիճ մտնելիս թօխօ ձու կուլ տալ:

Պ. պ. Խ-ն և Լ-ն պահպանեցին անսամբը:

Պ. Ստամբուլցեանը որոշել է «Ջոն Չոլ»-ի ներկայացումը կրկին ամեն շաբաթ:

Յանկանում ենք լիակատար յաջողութիւն:

Փարեմուկ




ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Բարեազիրս հասնի Շուշի Հմր չիմ գիտեր յուս, ֆամիլան չիդեմ.

«Մըշակի 229 հոմերին մէջ Շուշեցի բանդան բէշ բեթար գիտունին մէկը գրիւր է թէ. «կուսութեան խնդիրը համարել նսացած եւ ոչ մի նշանակութիւն չունեցող հարց, տրդաներից որ չի պահանջում կուսութիւն, սղջկաներից էլ չպէտք է պահանջել»:

Առ հա, քեզի լուսաւորութեան, ազատամտութեան Մօ, շուշեցի հարիֆ, չիմ գիտիւր աղայիս, վարժապետ իս, տէրտէր իս, չի-նոջիլի իս, վաճառական իս, ինչ ջին ու ջանալար իս, ինչ խելքի տէր իս, ինչ կրօնի,



ինչ Աստուծոյ խղճութիւնը կենիս, որ ատպէս թաւաքեալի խելքէդ դուս բաներ գրիսկը գաղթեթներուն մէջ, ամօթու անունդ ալ գրածիդ տակը չիս գնիր: Ծօ ջանս. չիս գիտիր, խելքդ հացի հետ իս կերիր, թէ գլխդ մրսեցրիր իս, թէ յակող տունը չէ, թէ վերնատունդ դարդակ է: Ախր Քր Աստուծուն դուրուդ կենիս. ես չիս ամէնայ օր քարոզիս կը թէ կուսութիւնը մօտից յիլիր է. հնցիր է, էլ աղջկայ կուսութիւնը պէտք չէ. հիմի լուսաւորութիւն է. ազատութիւն է. սահմանադրութիւն է: Վայ աշխարհ, քանդիս. ատպէս գրողներուն գրողը տան է, վայ ֆալաք տունդ ալթի ուստ էդնի, բրիշակ դանոնայ: Աս ինչեր գիմանանք: Անոր հմար հացը ձիւտը է էդեր, մենք ես եան, չենք կոնայ յետեւն համնի: Անոր հմար խէր ու բարաքեաթ չկայ, էլ վինձ ու պղտիկ չկայ. էլ հար ու մար չկայ, բիթուն ջուրը դրին. Պացիր է աղջկներուն կուսութիւնը, գուզեն օր ան ալ ջուրը դնէն, արթը բիթուն դառնան դալի հայթայ, ու ինչ չեղիս մեղը ուզին, թող ուտեն: Ատ հարիֆը գուզէ, օր աղջկները ասոր անոր հետ սիլի բիլի էնին, փէյժօր պսակելը հարուր մարդու հետ լիլուեն, յետև պսակեն, քանիմ հատ ալ անհէր բջիք հեաները ջեղ տանեն, կեսրարին փէշքեաշ էնին: Չիմ գիտիր, վեր ախմախ փեսան, վեր ձուն գլուխ կեսու կեսրարը ատպէս կիսամաշ հարսին իրեն զողոզներով տուն թողնի կը: Չանմ, գաթի ունինք չունինք, մէ սրբութիւնմ ունենք, տն ալ օր չամուի մէջը կոտիք կը. արթը մեր երկիրը դառնայ կը թամամ գեղի նախիր: Ինչդ օր նախրի մէջը կովերն ու եղները, զոչերն ու օչխրները. թափէքն ու կծերը յերար հետ կարծեն յիբար հետ մէ գոմի մէջ կապրեն, շուշեցի թաղայ գեալդի գիտնականը գուզէ օր մենք ալ դառնանք գիւղի նախիր, խառնելիք յիբար, յիբար հետ արծիք: յիբար հետ մէ գոմի մէջ ապրինք: Աս շուշեցի հարիֆ. աշար պսակեամ ին, հասած աղջկներ ունին. օրթը պօրտիս մեղքը շինքդ յըլի, թէ շիտակը չըսիս. գուզիս օր քու աղջկները իրենց պատիւը, իրենց սրբութիւնը ջուրը դնեն, յետև մարդ տանեն: էլ բան չունեմ ըսելու: Գիտեմ վենձ վենձ քաղքների աղջկները քեզի խաս խալթներ զրկին կը ատ քարոզիդ համար:

Համբաւաւոր ժեներալ
Ղալայջի Մարգար

Գասպար ջան

Չանմ, ատ Ստամբուլին հոս-հոսները հէջ «Պաթարալա» չին կարդայ. չին ճանչնայ ինձի: Փողք Աստուծոյ համ համբաւաւոր իմ. համ ժեներալ իմ, համ ալ պերլի նօմեր զալայջի: Ատ զոջայ յերկրին մէջ մէ յետ յընկած գեղմ, ես մէ խարաքա ջաղացմ, ես մէ քանդած յանտէր վանքմ չկայ օր ինձի ալ իրենց թարաֆէն պավերեննի ջուկին. ես ալ մարդու սրայ խառնիմ, էրթամ կաթոզիկոս ջուկիմ. համ էլ մեր դա-

րիբ դօնադներուն թէ ժանդոտ բան ու ման ունեն հօրս խէրին բաղիհաւայ զալայջիմ, լաւ պլպլցնիմ ճամբու դնիմ: Յանդէր մնայ, շատ ալ համբաւաւոր իմ, հմը տէր չունիմ, եղբալ չունիմ:*)

Անբախտ Ղալայջի Մարգար



—Դարչօ, առաջուրթարանսմ էն օրը դէպուտատ վուր ջոզում էին մէ քանի տաք գլխաններ միւր անումից էին խօսում—դուն ինչ կօսիս:

—Կօսիմ, վուր բէսար նամադուլ էին աշոււմ—իս ասիլ իմ վուր օքմինին ուշուցնիր տան. միզ ինչի ին մէջը խառնում—ժողովուրթը իփ գիդէ ուշուցնիր սալը. էդ բանը «Ինտլիգաններու» փեշակն է:

ԲԵՐԻՆ ԳԵՂԵՑԻ ԴՆՅԻՄ

Առաջին անգամ, հինգ գործողութեամբ պիէս, փոխադրութիւն Ս. Կլայէկեանի, Վրաց Ազնականների թատրոնում, երկուշաբթի, նոյեմբերի 7-ին:

Թիֆլիսի հասարակութիւնը երևի վախեցել էր Բերլինի դահճից, որ չէր յաճախել այդ օրը թատրոն: Մանաւանդ վախեցել էր նրա համար, որ դահճի գլխատման մի պատկերը ցուցադրւած էր թատրոնի կողքին, ներկայացման ամբողջ օրը:

Թէև յայտարարած էր, որ պ. Միրադեանը անպատճառ պէտք է մասնակցէ. բայց, երևի տանը դօնադներ ունենալու պատճառով ներկայացումը չսկսւած փախել էր: Այդ պակասը լրացրեց Հաւաքարի դերասան պ. Բաղդասարեանը, որը բաւարար

*) Կու կարդան հոս-հոսները, մագրամ, Աստուծ վուչ անէ, վոր քիզ էլ դաւիթնոտութիւն տան, արա ախտուս չիս—ինչ քու իմ հարգն է էջմիաճնի ժողովքը. մինք ինչ շահ ունինք. ով շահ ունի—գլուխը քարովը նատայ:

տարա սուանց փորձերի իր փորձանքներով սու. դերը և դատարկ աթոռները: Այդ մեծ մտիթարանք է Հայոց ազգի համար:

Ինչպէս փոխադրողն ասում էր, պիէսը պէտք է լինէր շատ հետաքրքրական, բայց երևի դերակատարները այդ հետաքրքիր և համեղ կտորները քաղցած ժամանակ կերել էին Մարմարովի բեստրոնում կամ անտէրանախրական թոյնելով, փիսօս տարել էր:

Առաջին գործողութիւնը բաւականին յաջող անցաւ, ինչպէս միշտ յաջող է գնում պ. Փարեմուզի Հնցիկուպէդեան «Պաթարալա»-ի մէջ: Երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգ. ֆու, սխալեցի, մինչև չորրորդ գործողութիւնը մի կերպ, կրճատութեամբ, երկարութեամբով ետաւաւան, իսկ հինգերորդ գործողութիւնը մնացել էր դերասանուհիներ տ. տ. Նինուէլի և Մանուշարեանի պայուսակներում, որոնք իրենց փողը չստանալով կանխիկ, այսինքն, деньги периодъ, այնքանով ծղկել էին: Չնայելով ուստիկանութեան և թատրոնի վարչութեան թախանձագին խնդրանքներին, հինգերորդ գործողութիւնը չանցաւ, մնաց մի այլ բարեյաջող օրւայ, երբ Մանուշարեանը «Ոսկի բարեկամ»-ի մէջ գրւած կը լինի «օրն բարեկեղիցի»: Որովհետև տիկին Սօֆի-Վարդիթերը միշտ ասում է ամենքին, որ փոշտում է ընցենդենաների գրւածների վրայ, ուստի այժմ նրա մասին ոչինչ չենք գրում, որպէսզի չփոշտայ, այլ արխէյին յօրանջէ: Դերակատարները բաւարար էին, այնպէս որ կարող են բոլորն էլ յօրանջել:

Թատրոնը լիքն էր դատարկ աթոռներով: Ներկայացումը սկսեց վարագոյրը բարձրանալուց անմիջապէս յետոյ: Եթէ խաղային հինգերորդ գործողութիւնը ևս, ճիշտ հաւաստիս կը վերջանար ներկայացումը: Ներկայացումը վերջանալուց յետոյ հասարակութիւնը, եթէ կար, գնացին իրենց տները կամ մի ուրիշ տեղ ընթրիք կամ լուսաքեաքաք ուտելու:

Սրանից աւել՝

Միսս չի

ԱՂՆԱՆ ՄԵՂԵԴԻ

- Լալկան աշուն
- Երկիրը լուս,
- Տերները
- Սգացին.
- Ու սղբում եմ
- Ցաւս մրմուռ,
- Յոյսերս անդարձ
- Գնացին...

- Անձրեում է
- Օրը մթնոտ,
- Բամին ունում
- Շարունակ
- Եւ վշտերը
- Սկսած թունոտ
- Միբոս են պատել
- Անյատակ...

Հնա աշուն է
 Չանձրոյթի ծով,
 Սև ամպերով
 Գուժաբեր...
 Օրն է լալիս,
 Հեկեկոցով
 Մեռնում յոյգեր
 Եւ յոյսեր...

Յճճճ:դ.



Բ Ա Ն Ը Վ Ի Բ Չ Ն Է

էս հանգի էլ բան իք իմացի, էս հանգի էլ խաթա իք տէհի, ախպեր:

Քնած թէ արթուն, պառկած թէ ցըցւած՝—ամեն տիգ, միշտ ու հանապազ, — գիտ կաթղիկոս, գիտ կաթղիկոս, գիտ կաթղիկոս:

Տանն իս, դոնազ է գալի՝ խօսկն ու մոհրաթն ինչ է—կաթղիկոս, բազարն իս գընում պրաւիգիա առնելու—կաթղիկոս, ժամ իս գնում աղօթիկ անելու՝ կաթղիկոս, դոխտուրի մօզ իս գնում փթած եարէզ սաղացնելու—կաթղիկոս, բէղակցիէն իս գընում Գասպարի հիդ մէ քիչ խելքին գօտալու ու խուրազրի գուլը թիմահարելու—կաթղիկոս, թագա գազէթ է դուս պրծնում՝ կաթղիկոս, հին գազէթը հօ էլ մի ասի. նա հէնց ինքը կաթղիկոս է, հալա մէ բան էլ աւելի...

Ձէ, ախպեր, վունց որ տեսնում իմ, էս բանը շատ սուրբօգնի բան է. այ, էստու համա էլ բազազը իր արշինն ու չիթը թողած՝ ժամ է վազում ամպատառ Օրմանօվ էպիզկոպոզին կաթղիկոս շոգելու. վարժապետը իր շօլէն է թողի, բուղալտէրը իր թունդ ու միշտ խառնած հաշիւները, դոխտուրները իրանց հիւանդներուն մոռցիլ ին, գազէթներում գրողները գիտ միանա նրա վրայ ին գրում, կաթղիկոս չուզողներն ու «խուզի» հիդ հաւարեցողները շոգելու ու շոգելու համա հոգի ին տալի... մախլան, ինչ գուլները ցաւեցնիմ, ամէնքը գժած՝ կաթղիկոսական դառի դարաբի մէջն ին:

Մէ պարտիէն,—միր խիստ խելօք ու զօրբա գլխները,—կրակ կտրած՝ Օրմանովին ին ուզում. թէ նա կուլի՝ կուլի, թէ չէ ու՝ հաւատներս փոխում ինք, կօսէ:

Վրա էրկու պարտիէն աչքակապուկ է խաղում. ում որ ուզում է՝ դրազ է քաշի, ում որ չի ուզում՝ նրան մէջն է բերի:

Սա, գիտիք ինչ, մէ մինձ պօլուտիկուրի գուրձ է, ամէն մարդու խիլքի բան չէ. սա, էսպէս ասած, փոկուսիկապարի բան է:

Վրա իրիք պարտիէն էլ՝ վուչ իր արածն է հասկանում, վուչ իր ասածը. մինք էսքան վուլտ վուչ մէ արխէպիզկոպոզի ու էպիզկոպոզի չկանացինք կաթղիկոս շինի,

նա կի վարժապետին է ուզում կաթղիկոսացնի. արա դա ըլելու բան է. վուր չէ սազ գալի. էդ տարսը մարդ ին դառի էտ պարտիի մարդիքը ու մինչկի հիմի չին գիգի, թէ ծառը ջէր ծաղիկ է տալի, իժուձ ծաղկէմէն պտուղ է ըլում, իժուձ պտուղը հասնում է, ու իփ հասնում է ան ուտում է, ան գործ է ածում:

Վարժապետութիւնն էլ էտէնց է, ջէր պտի էպիզկոպոզ դառնայ, իժուձ արխէպիսկոպոզ ըլի, իժուձ սինօթի չլէն ու վիբը կաթղիկոս:

էս պարտիա, էն պարտիա... լմա, շատ լաւ, ախպեր. մէ չի՞ ըլի իմանանք, թէ դիփ միանա էտ պարտիի խալը քանի հազար կուլի. ետուուն, յիսուն, ետ սաքսան հազար կուլի. թօբա թէ. սրանք վուր իրանց համա կաթղիկոս ին շոգում, բաս մէկ էլ խալը՝ նրանք, վուր մէ քանի միլիօն ին, նրանց ինչ շուղար ին տալու. նրանք ախմախներ ին. չէ վուր նրանք էլ աթամօթի ին՝ փսակելու ին, բաժնելու ին, ծընւելու ին, մեռնելու ին, շատիքը գորբէգոր կուլին, բաս նրանք ձէն չունին, բաս նրանք հայ-քրիստոնիա չին, նրանք կաթղիկոս չին ուզում...

Ուզում ին, համա վուր չին տալի, ումը գանգատ անին. միրաւօյ սուղը գնան՝ արգէն յիզ կուտան, օկրուժի սուղը գնան՝ մասխարա կու գցին, պալատը գնան՝ ստօրօժը դուս կօնէ, վաւր ջհաննաժը գնան. էփրէմ էպիզկոպոզի մօզ գնան՝ բան չի դուս գայ. նա մէնակ «լաւ-բարաթին» մարդուկնիկ բաժնելու գուրձ է իմանում, մէկ էլ՝ մէձրած տիղը մէ սհաթ առաջ գնալն ու հոքին դուս գալու չափ սպասիլը:

էլ ո՞վ մնաց. Քալանթարի մօզ գնան՝ նա շատ վուլտ տանը չէ, ետ հօրտօպիան է ածում, ետ օպերա է գնում, ետ գիղիլին է գնում մածուն շինիլ է սովրեցնում, ետ «Մշակի» բէղակցիումը խիլք է բաժնում... Հաջի Համբարձում Առաքելօվի մօզ գնան՝ նա էլ էս թաւուր «կիւտուզին» գուրձերու գլուխ չունէ. Լէօի մօզ գնան՝ նա պատմութիւնը «իր հանգի» թիսելու էգնէմէն է, Աշոտ Աթանասովի մօտ գնան՝ արա ինչ լազաթ. մարդը էնչախէէտ խուզուկովի, հաւ ու գոմշի վրէն է խօսում, ու ինքն էլ դրանց խասիաթը ունէ. վրացիներուն գանգատին՝ քացի կուտան ու գինու չարեքանուցը վրէն կու կտարատին. ուսններուն գանգատին՝ «պաշօլ վօն, արմեաշկա» կօսին. թուրքերու մօզ գնան՝ միր բանը չէ, կօսին. մէ խօսիլով՝ էրկու ջրի արանքումն ին մնացի. վիբը մնում է, վուր ջուրը ննգնին, ու քանի էրկու ջրի արանքումն ին՝ ասի, ձեռը տաք ջուրը կուլընգնին, ու ամառն էլ՝ սառը. սրանով էլ բանը կութայ կուլի:


Հնա, վէրիվը դոխտուրներ սաի ու միտս ննգաւ. միր պատական Սամսոն Ձերբէգօվը վուր Օրմանօվին կաթղիկոս առաջարկից ու մէ-էրկու գաղէթներ էլ ասին թէ

նա հիւանդ է ու պարտիչ ունէ՝ հօսէ, բաշտադօնում, էս միր քաղիլի ու գործնիցի հայ դոխտուրները թաթարեանի ձեռաց Ստամբօլ թաւն ու բանից բէխաբար Օրմանօվին վրա պրծնելով՝ շուրիքը հանեցին, էլ չաքուչնիր խփիլ, էլ փուրին հուփ տալ, էլ ասիղներ, էլ քորոցներ, էլ լիզուն տրնտղիլ, էլ շունչ քաշիլ տալ, մէ խօսքով դոխտուրութէնի ու դալլաքութէնի ամէն ետրազ խօզ գցեցին, վուր իմանան ու վճռին, թէ հիւանդ է՝ բալնիցա տանին, թէ շատ ծիր է ու դադումի շուրք չունէ՝ Չուբալօվի «հանգստարանը» դրդին, թէ առիւշ է՝ դուզ էլ միաձին բէրին ու կաթղիկոս շինին...

Գուս էկաւ, վուր էտ մարթը պատուական առօխութէնի առեստատ է ունեցի ու ուրիշները կի, միր լօթի տգիբը, ազգի աբլակատները նրա վրէն հետտի գօրքս շարիլ ին մօգնում, թէ ինչ է, նրան դօտով հիւանդացնին ու ան թէ ջրացնին. համա նրա շաններէմէն էրէում է, վուր էտ չի օտկելու ու վիբը... վիբը կուլի վուր... վուչ դէս, վուչ դէն... դէմ ու դէմը էջմիաձին բերին բաս, ու մնացածը գիտիք էլի. կաթղիկոս նստեցնին:

Դիփ Աստու բան է, մէկ էլ «Խաթաբալի» կամքը ու վուրն որ լաւն է, թող էն էլ կատարել, ամէն:


Կախուլ ձառուկեանց



ԳՈՒՅԾ ՏԵՐԵՆԵՐ


- 1. Ագասուրեան ձանապարհը.**
 —Սա վճռի եմ ամուսնանալ հէնց օտջին առաջարկողի հետ:
 —Այ քեզ բան. պատճառն ինչ է:
 —Պատճառն այն է, որ ծնողներս ինձ շատ են ձնշում և չեն թողնում վիլիսապիզի վրա հեծնել սովորել: Հէնց որ մարդու գնամ, էլ ոչ ոքի չեմ լսելու...
- 2. Համբարի վնասակարութիւնը.**
 —Յարգելի տիկին, հաւատաւոր էք արդեօք, որ համբարը կարող է առողջութեանը վնասել, ինչպէս որ բժիշկներն էլ պընդում են:
 —Աւելի քան հաւատում եմ: Օրիքս մի պարոն ինձ համբարեց և այդ բանը նրա համար շատ վատ վերջացաւ... Ամուսինս այդ բանը կարող է անձամբ վկայել...

ՄԿՍՏԻՒՄԻ ՎՅԿՅՈՒՆ



Այն օրից, երբ Լուսիկը գողացւեց Ջիւրիկոյայի նկատմամբ, հասարակութիւնը ցուցանակողիսի սրահում պահուէս է թողնում պատկերները դիտելու:

ՅՈՒՐ ԻՆՍՏՐՈՒՄ



ՉԲՕՍԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Մայրը.—Ո՛հ, ինչ ձանձրացնում է ինձ ամեն բանով պատահած զինուորականներին պատիւ տալը: Գնի՛ր.—Ինչ ինձ, կարծես թէ երբեք չէր ձանձրացնի պատիւս նախը:

3. Մուսկն արգելած է.

- Կարելի է գնալ տիկին Իշխանեանի ու բորնիան:
- Սյնտեղ մտնել արգելւած է:
- Սակայն ես նրա ամուսինն եմ...
- Եւս առաւել՝ չի կարելի...

4. Աւելանի օտարը.

Օրիորդը.— Պարոն նաւապետ, տարէք ինձ Ամերիկա, այդ նոր աշխարհը...
 Մաւապետը.— Ամերիկա: Իա շատ հեռու է, օրիորդ, համ էլ ճանապարհին կարող էք ծովային հիւանդութիւն ստանալ: Մենք առանց նաւ նստելու էլ կարող ենք ամբողջ աշխարհը շրջել... Գնանք նախաճաշելու «Եւրոպա» ճաշարանում, ճաշենք «Ասիա»-ում, ընթրենք «Ամերիկա»-ում, դաշինք ամբողջովու համար էլ մի-մի խմենք «Աֆրիկա»-ում և վերջը իջնենք ու մնանք «Աւստրալիա» հիւրանոցում:

5 Թանգը.

- Ի ու ուզում ես ամուսնանալ, բայց միթէ չգիտես, որ կին պահելը խիստ թանգ է նստում:
- Այո, գիտեմ, բայց իմ հաշուով՝ առանց կին աւելի թանգ է նստում...

6. Դառն ձօնաբանութիւն.

- Ասացէք խնդրեմ, սիրալիր պարոն, թի էր այն կինը, որի հետ դուք հէնց այժմ իրում էիք:
- Դա իմ կինն է:
- Երևի դուք կատակ էք անում:
- Ամենևին ոչ. դժբախտաբար՝ ասածս դառն ճշմարտութիւնն է:


7. Համեստ փեսան

- Ինչ կարող էք առաջարկել իմ աղջկան:
- Սիրով լիքը մի սիրտ:
- Իա ումանական դարձւածք է: Աւելի լաւ է ոսկով լիքը տոպրակ առաջարկել:
- Ներդուրութիւն. ոսկով լի տոպրակն ես ձեր արժանապատուութիւնից եմ սպասում:

8. Անօճորհակալ օրդին

Հայրը.— Ի ու վատ արարած ես, անպէտքի մէկը, անշնորհակալ օրդին:
 Որդին.— Ինչպէս քեզ շնորհակալ լինիմ: Ի ու ինձ աշխարհ ես բերել, ես այդ գիտեմ: Ես էլ հօ չեմ կարող նոյն ձևով քեզ շնորհակալութիւն յայտնել...

Համայնացրեց
 Եզոպ ծայրայեղ վարդապետ



АТРПЕТЪ

1. **Мамед-Али-Шах**
 Народное движение въ Персіи **ЦѢНА 1 РУБ.**

2. **Рахим-Хан**
 Смуты въ Персіи **ЦѢН 20 коп.**

3. **ИМАМАТЪ**, государственный строй и религиозное возрѣніе въ Персіи, **цѣна 1 руб.**

4. **БАБИТЫ и БЕХАЙТЫ**
 Новое религиозное теченіе и ученіе въ Персіи **цѣна 60 коп.**
 Во всѣхъ книжныхъ магазинахъ. **00—8**

Первокл. ресторажъ
„АННОНА“
 „Зданіе Артистическаго Общества“

Сод. Я. Т. Бондаренко

Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. **играетъ вновь приглаш. итальянскій струнный оркестръ, съ пѣвицею, участіемъ пѣвицы — Г-жи Сакко и Марія Оландезе и баритона Джелларо Оландезе, подъ управленіемъ САККО.**

ЗАВТРАКИ, отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2 час. до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдей—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; биллиарды. Имѣются кабинеты. отъ жары можно спастись только въ

„АННОНА“ 52—27

— Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառում է —

Ն Ա Ր - Դ Ո Ս

Պ Ա Յ Բ Ա Ր

Վ Է Պ

Գինն է 75 կոպեկ

Գլխավոր պահեստը «Գուտտնըերզ» գրախանութում, ուր և գինում են գումարով գնողները:

10—4



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ



Ի Ե Ս Տ Ո Ր Ա Ն - Ճ Ա Շ Ա Ր Ա Ն

„ԴԻԼԻ ՊՈՒՉՈՒԻ“


Քաղաքի կենտրոնում, ամենայնպարմար տեղ Թամամշեան քարվանսարայի տակ

ՄԻՅՏ ԹԱՐՄ ՄԹԵՐՔԻՑ

— Եւրոպական եւ ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Ընտիր ըմպելիներ, զով կարենտ-սենեակներ մաքուր խո- հանոց ու պատրաստակամ ծառաներ

25—25



Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

«ՕՐՄԱՆԵԱՆ ԳԵՂԱՐԻԵՍԱԿԱՆ ՅՈՒՇԱՐԱՐ»-Ը

Նախորդ պատրիարք սրբազան Օրմանեանի լուսատիպ պատկերը եր կենսագրականով, գրական արտադրութիւններով ու խորհրդանշաններով, գրեթէ 50 սանթիմետր թղթի մեծութեան վրայ: Գործը գեղարեստական, պարունակութիւնը հրահանգիչ, տեսքը հրապուրիչ: Գինն է 70 սանթիմ. Պուլկարիոյ և արտասահմանի համար բոստի ծախքով 80 սանթիմ., իսկ Ռուսաստանի համար 30 կոպէկ (պօսթով): Ռուսաստանի մեր ընդհ. գործակալն է Արժ. Տէր-Կարապետ քահ. Մալխասեան. Պաթում.

Թիֆլիսում գիմել «Գուտենբերգ» գրաւաճառանոցին: Իսկ Պուլկարիոյ և արտասահմանի ազգայնէր կրնան գիմել ուղղակի իր հեղինակին. Արամ Մահակեան, ուլիցա Բրէչլավ, Ֆիլիպպ. Պուլկարիա: 6—6



ՍԱՊՈՆ «ԳԻՐԱՆԻՆ»

— Ե. ԲԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ. ՄՈՍԿՎԱ —
Պանսար Թիֆլիսում Գալաւինսկ. պր.
— Պահանջեցէք ամենուրեք —
52—1

ՆՈՐ ՎԷՊ

ԵՐԻԱՆԴ ԳՕՇ

ԿԱՐԱ-ԴԱՐԻՑԻ

ԳԻՆԸ 50 Կ.
Վաճառում է Թիֆլիսի բոլոր գրա- վաճառանոցներու
Հեղինակից բերել տուրը ճանապարհ- հաճախ չի վճարում: Դիմել՝ Тиф- лисъ, Ерусалимскій пер. 12. А. Генджіану. Նոյն տեղը վաճառում է «Ռուս նորագոյն գրողներ» ՍԵՐԻՍՎ վեց գրքոյկ ճանապարհհաճախով 30 կոպ. կարելի է մարկաներով:
10—2

О Т К Р Ы Т А П О Д П И С К А НА СОБРАНИЕ

НЕ ИЗДАНЫХ ХУДОЖЕСТВЕННЫХ ПРОИЗВЕДЕНИЙ Л. Н. ТОЛСТОГО

ИЗДАНИЕ АЛЕКСАНДРЫ ЛЬВОВНЫ ТОЛСТОЙ.

Слѣдуя указаніямъ, даннымъ ЛЬВОМЪ НИКОЛАЕВИЧЕМЪ ТОЛСТЫМЪ, дочь его Александра Львовна пред- приняла изданіе оставшихся послѣ него, еще не бывшихъ въ печати, его художественныхъ произведеній Чистый доходъ съ этого изданія будетъ употребленъ издательницей согласно волѣ ЛЬВА НИКОЛАЕВИЧА. Въ это изданіе войдутъ слѣдующія повѣсти, драмы и неоконченныя произведенія: Хаджи-Муратъ.—Отецъ Сергій.—Дьяволъ.—Фальшивый купонъ.—Послѣ бала.—Что я видѣлъ во снѣ.— Алеша горшокъ.—Живой трупъ.—Ходынка.—Отъ ней всѣ качества.—Записки сумасшедшаго.—Нѣтъ въ мірѣ виноватыхъ.—Кто убійцы.—Записки Ѳедора Кузьмича.—Вступленіе къ исторіи матери.—Дѣтская мудрость.— Отецъ Василій и нѣкоторыя другія произведенія.

Изданіе это выйдеть въ свѣтъ по подпискѣ, въ ограниченномъ количествѣ экзempl., и будетъ состоять изъ трехъ изящныхъ томовъ большого формата, на лучшей бумагѣ, съ портретами и автографами Л: Н. Толстого.

Цѣна за три тома 6 руб. съ пересылкой 6 руб. 50 коп.

ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА: при подпискѣ 3 руб. и при полученіи I тома —остальные 3 руб.
ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: Москва, Кузнецкій Мостъ, домъ кн. Гагарина, кв. 5, контора изданій А. Л. Тол- стой, и всѣхъ во главныхъ книжн. магазинахъ.
9—8



ს ა რ კ ა მ ა რ ი ა ნ ი